



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2020 թվականի թիվ 21-Ա

ք. Երևան

«ՖՄ-105,5» ՍՊ(«ՖՄ-105,5» ՌԱԴԻՈԾՐԱԳԻՐ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ, «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հատարարելու մասին» Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը, հաշվի առնելով, որ Պարետի ցուցումով կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի վարչական սահման մուտք գործելու և վարչական սահմաններից ելք կատարելու հատուկ ռեժիմ և ղեկավարվելով «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 8-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը կասեցնել Հանձնաժողովի նախաձեռնությամբ 2020 թվականի մարտի 9-ին «ՖՄ-105,5» ՍՊ(«ՖՄ-105,5» ռադիոծրագիր) ընկերության հանդեպ հարուցված թիվ 2, 2020թվականի մարտի 9-ին կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ և մարտի 10-ին կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերությունների հանդեպ դիմումի վրա հարուցված հարուցված համապատասխանաբար թիվ 3 և թիվ 4 վարչական վարույթները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելուն օրվան հաջորդող օրվանից:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

S. Հակոբյան